




**Աննա
ՓԱԽԼՅԱՆ**

Տնտեսագիտության
թեկնածու, դոցենտ

2006 թ. գերազանցությամբ ավարտել է ԵՐՊՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ)՝ «Համաշխարհային տնտեսագիտություն», իսկ 2010 թ.՝ ՀՊՏՀ ասպիրանտուրան՝ «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ: 2012 թ. պաշտպանել է թեկնածուական արեւնախոսություն՝ ստանալով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի ասիստենտ է, «Ամբերդ» հեռազտրական կենտրոնի հրավիրյալ փորձագետ: Վերապատրաստվել է դասախոսություններ է վարել մի շարք եվրոպական բուհերում: Հեղինակ է 41 գիտական և 4 գիտահանրամատչելի վերլուծական աշխատանքների:

 ORCID ID <https://orcid.org/0000-0002-5854-2473>

ԻՆՔՆԱՄԵԿՈՒՍԱՑՄԱՆ ՀԱՄԱԹԻՎԸ «ԽՈՍՏԱՆՈՒՄ» Է ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՆՈՐ ԲՈՆԿՈՒՄՆԵՐ ԵՐԵՎԱՆՈՒՄ...

Ոչ թե մարդկանց գիտակցությունն է որոշում նրանց կեցությունը, այլ ընդհակառակը՝ նրանց հասարակական կեցությունն է որոշում նրանց գիտակցությունը:

Կարլ Մարքս

Հիմնաբառեր. թագավարակ, Covid-19, ինքնամեկուսացում, համաթիվ, կարանտին, արտակարգ դրություն, քաղաքային ակտիվություն

Արդեն երրորդ եռամսյակն անընդմեջ աշխարհի հեղինակավոր գիտնականներն ու սկսնակ հեղազոտողներն իրենց մտավոր ներուժը կենտրոնացրել են Covid-19 համավարակի բազմակողմանի ուսումնասիրության վրա:

Տարբեր քաղաքներում համավարակի ընթացքում մարդկանց վարքագծի հեղազոտման նպատակով ստեղծվել է նոր ցուցանիշ՝ ինքնամեկուսացման համաթիվը, որը թույլ է տալիս գնահատել քաղաքային բնակչության ակտիվության մակարդակն արտակարգ դրության պայմաններում՝ այն համեմատելով նախակարանտինային ժամանակաշրջանի բնականոն իրավիճակի հետ:

Երևանում ինքնամեկուսացման համաթիվ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դիտարկվող ժամանակահատվածում ինքնամեկուսացման մակարդակն առավել բարձր է եղել արտակարգ դրության հայտարարման սկզբնական փուլում, սակայն հետագայում նկատվել է բնակչության ակտիվության կտրուկ մեծացում՝ անկախ վարակի տարածման աճող ցուցանիշներից: Դա մասամբ պայմանավորված է սահմանափակումների մեղմացմամբ, մասամբ էլ՝ քաղաքացիների ցածր սոցիալական պատասխանատվությամբ: Նման միտումների պահպանման դեպքում առաջիկայում, թերևս, դժվար թե հաջողվի զսպել համավարակը:

Արդեն երրորդ եռամսյակն է, որ ամբողջ աշխարհի հետազոտողները դուրս են եկել «մրցավազքի»՝ ձգտելով պարզել Covid-19 (SARS-CoV-2) նոր թագավարակի առողջապահական, կենսաքիմիական,

տնտեսական, սոցիալական և այլ բնույթի դրսևորումները, ինչպես նաև պահանջվածության և արդիականության «քողի» ներքո մատուցել սեփական վերլուծական հմտությունները: «Մրցավազքից» անմասն չի մնացել նաև գործարար հատվածը: COVID-19 համավարակը նպաստել է ժամանակի հրամայականին համահունչ մի շարք հրատապ նորարարությունների ստեղծմանը՝ սկսած նոր դիզայնով շնչադիմակներից, դիմապաշտպան սաղավարտներից, առանց բռնակին դիպչելու՝ դռները բացող հարմարանքներից (որոնք կարելի է տպել 3D տպիչով¹) մինչև լուսային ճառագայթներով հիվանդանոցային վարակները մաքրող ռոբոտներն² ու սոցիալական հեռավորության խախտման դեպքում լուսային և ձայնային ազդանշաններ արձակող՝ հնդկական արտադրության նորաձև վզնոցները³: Իրավիճակը, կարծես թե, հիշեցնում է Երկրորդ աշխարհամարտի «գյուտառատ» ժամանակները, երբ առաջին անգամ հայտնվեցին թվային համակարգչի և հրթիռի տեխնոլոգիաները...

Ստեղծագործական մտքի համատարած փայլատակումների այս խորապատկերում «Յանդեքս» (Yandex) ընկերությունների

խմբի վերլուծաբաններն էլ, իրենց հերթին, ստեղծել են նոր ինտեգրացված ցուցանիշ՝ «ինքնամեկուսացման համաթիվը» (*индекс самоизоляции, self-isolation index*)⁴, որը թույլ է տալիս հաշվարկել Covid-19 համավարակի ընթացքում որոշակի օրվա դրությամբ քաղաքային ակտիվությունը՝ համեմատելով դա նախակարանտինային ժամանակահատվածի համանման օրվա քաղաքային սովորական անցուդարձի⁵ հետ: Համաթվի արժեքները տատանվում են 0-5 միավորային միջակայքում, որտեղ «0»-ին մոտ արժեքները բնորոշում են ինքնամեկուսացման չափազանց ցածր կամ քաղաքային ակտիվության բարձր մակարդակ, իսկ «5»-ին ձգտող արժեքները՝ ինքնամեկուսացման բարձր աստիճան, որն արտահայտվում է փողոցներում մարդկանց գրեթե բացակայությամբ (տես պատկեր 1):

Եվ քանի որ ինքնամեկուսացումը համարվում է կորոնավիրուսի տարածման դեմ պայքարի հիմնական միջոցներից մեկը, հետևաբար՝ որքան բարձր է ինքնամեկուսացման համաթվի արժեքը, այնքան ավելի դժվար է վարակի տարածումը, և ընդհակառակը:



ՊԱՏԿԵՐ 1

Ինքնամեկուսացման համաթվի մակարդակն ըստ մարդկանց տեղաշարժի ակտիվության⁵

¹ World Economic Forum, Theses new gadgets were designed to fight COVID-19 /written by Peter Beech/, April 05, 2020, <https://www.weforum.org/agenda/2020/04/coronavirus-covid19-pandemic-gadgets-innovation-technology/>
² BBC News, Coronavirus: Robots use light beams to zap hospital viruses, 20 March 2020, <https://www.bbc.com/news/business-51914722>
³ Social distancing necklace warns when people get too close, Wallpaper Newsletter, 19.06.2020, <https://www.wallpaper.com/watches-and-jewellery/social-distancing-necklace-warns-when-people-get-too-close>
⁴ Индекс самоизоляции, <https://yandex.ru/company/researches/2020/podomam>
⁵ Հաշվարկներում որպես համեմատությունների հիմք և մեկնակետ է ընդունվել 2020 թ. մայիսի 2-ից (երկուշաբթի) 5-ը (հինգշաբթի) ընկած ժամանակահատվածի քաղաքային բնականոն ակտիվության միջինացված մակարդակը:

Ինքնամեկուսացման համաթիվը հիմնվում է «Յանդեքսի» տարբեր հավելվածների ու ծառայությունների կիրառման ինտեգրացված տվյալների վրա: Այսպես, օրինակ, որևէ քաղաքում օրվա որոշակի ժամերին «Яндекс.Такси» հավելվածի ծառայություններից օգտվողների թիվը մասնակի տեղեկություն է պարունակում քաղաքում անցուդարձի վերաբերյալ: Մինչդեռ, օրինակ, «Яндекс.Еда» հավելվածով կամ «Яндекс.Лавка» ծառայության միջոցով սննդի և կենցաղային իրերի պատվիրման հասցեների մշտադիտարկումը և համեմատությունը «նախակորոնավիրուսային» ժամանակահատվածի հետ թույլ են տալիս պատկերացում կազմել տանը մնացողների կամ ինքնամեկուսացածների թվի փոփոխության մասին:

Առավել ողջամիտներն ու քննադատները, իհարկե, կշտապեն հակադարձել, թե իբր վերոնշյալ հավելվածներից և ծառայություններից օգտվում է բնակչության սահմանափակ հատվածը, և հետևապես՝ այդ տվյալներն ի զորու չեն ձևավորելու մի ամբողջ քաղաքի բնակչության ինքնամեկուսացման հակվածության իրական կամ նույնիսկ մոտավոր պատկերը: Տրամաբանորեն, ինչ խոսք, ճիշտ է, բայց իրականում՝ փոքր-ինչ այլ կերպ...

Իրականում, գաղտնիքն աճող «սմարթֆոնամոլության» մեջ է... Արդի ժամանակաշրջանում խելացի հեռախոսների՝ սմարթֆոնների նորագույն մոդելներին և դրանց՝ օրեցօր փոփոխվող հնարավորություններին տիրապետումն ընկալվում է որպես հասարակության շրջանում անձի սոցիալական դիրքավորման անհրաժեշտ բաղադրիչ: Ինչ խոսք, զվարճալի է, երբ մատների մի քանի հպումով սմարթֆոնը հաշվում է օրվա ընթացքում ձեր կատարած քայլերը՝ դրանք վերածելով կիլոմետրերի և սպառած կալորիաների, ինչպես նաև քարտեզային հավելվածների կամ անլար (Wi-Fi) կապի հասանելիությամբ մատնանշում ձեր աշխարհագրական տեղադրությունը կամ, առավել նորաձև բնորոշմամբ,

«գեոլոկացիան», հուշում տան և աշխատանքի վայրի ճշգրիտ հասցեները, առաջարկում հոգեհարազատ երթուղիներ, հետաքրքրող ապրանքների և ծառայությունների գովազդներ, համաժամանակեցնում տարբեր համակարգչային սարքավորումներում զետեղված էլեկտրոնային տեղեկատվությունը և այլն: Ու այսպես ժամանակի ընթացքում սմարթֆոնը դառնում է ձեր «ամենամտերիմ ընկերը», որին հասանելի են բոլոր գաղտնիքները՝ սկսած անձնական նամակագրություններից, գաղտաբառերից մինչև բանկային հաշիվներ ու գործարքներ:


Եվ բնական է, որ այդ տեղեկությունները, ձեզնից և ձեր «անբաժան ընկերօջից» բացի, հասանելի են առնվազն ձեր իսկ կողմից ներբեռնված և օգտագործվող բջջային հավելվածները ստեղծող ընկերություններին, որոնք դժվար թե հրաժարվեն դրանք վաճառելու գայթակղիչ առևտրային առաջարկներից:

Առավել մտահոգիչն այն է, որ սմարթֆոնները կարող են բացահայտել օգտատիրոջ մասին կարևոր տվյալներ՝ առանց վերջինիս իմացության և, հաճախ, առանց նրա թույլտվության⁷:

«Յանդեքսի» ինքնամեկուսացման համաթիվը հաշվարկվում է սահմանափակ թվով, հիմնականում՝ Ռուսաստանի և մերձավոր արտերկրի խոշոր քաղաքների համար (Մոսկվա, Սանկտ Պետերբուրգ, Նովոսիբիրսկ, Եկատերինբուրգ և այլն), որտեղ բնակչության քանակը գերազանցում է 1 միլիոնը: Հատկանշական է, որ համաթիվը հասանելի է նաև Երևանի համար:

«Հ կառավարության 2020 թվականի ապրիլի 3-ի N 461-Ն որոշմամբ ինքնամեկուսացումը սահմանվում է որպես «անձանց, այդ թվում՝ հիվանդի կամ վարակվածի կամ նրանց հետ շփված անձանց (կոնտակտավորների) առանձնացումն իրենց մշտական բնակության կամ իր նախընտրությամբ մեկ այլ վայրում՝ այլ անձանց հետ անմիջական շփումը սահմանափակելու և վարակի տարածումը կան-

⁷ Temming M., Smartphones put your privacy at risk, Science News for Students, January 30, 2018, <https://www.sciencenewsforstudents.org/article/smartphones-put-your-privacy-risk>



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Ինքնամեկուսացման համաթիվը Երևանում՝ արտակարգ դրության հայտարարման և դրան նախորդող ժամանակահատվածում⁸

խելու նպատակով⁹:

Հատկանշական է, որ այն որոշումը, որի շրջանակներում «Հատուկ ծրագրային ապահովումը հեռախոսի տեղակայման միջոցով ֆիքսում է ինքնամեկուսացածի տեղակայման վայրը, որի վերաբերյալ տվյալները իրական ժամանակի ռեժիմում արտացոլվում են հատուկ համակարգչային ծրագրում» (կետ 42), ՀՀ կառավարությունն ընդունել է 2020 թվականի ապրիլի 3-ին՝ մարդկանց անձնական տվյալների գաղտնիության պահպանման և խախտման վերաբերյալ բուռն քննարկումներից հետո միայն, մինչդեռ Երևանի վերաբերյալ «Յանդեքսի» հաշվարկները սկիզբ են առնում մարտի 2-ից և, ըստ էության, առանց համապատասխան թույլտվության առկայության...

Գծապատկեր 1-ում ներկայացված է մայրաքաղաք Երևանում ինքնամեկուսացման համաթվի մակարդակը ՀՀ կառավարության որոշմամբ¹⁰ 2020 թ. մարտի 16-ից մինչև ապրիլի 14-ը հայտարարված արտա-

կարգ դրության և դրան նախորդող ժամանակահատվածում: Նախքան կառավարության կողմից արտակարգ դրության հայտարարումը՝ ինքնամեկուսացման մակարդակը Երևանում բավական ցածր էր, թեև այդ ժամանակահատվածում արդեն իսկ սկսվել էին զանգվածային միջոցառումների չեղարկումները: Արտակարգ դրությունը և ազատ տեղաշարժի նկատմամբ կոշտ սահմանափակումներն ի վերջո ստիպեցին հասնել ինքնամեկուսացման՝ Երևանի համար մինչ այդ աննախադեպ մակարդակի: Թեև քաղաքային ակտիվությունն առավել զուսպ է եղել հատկապես շաբաթ և կիրակի օրերին՝ հասնելով ինքնամեկուսացման համաթվի ամենաբարձր՝ 4-5 միավորի միջակայքին, սակայն հաջորդող ժամանակահատվածներում դա այլևս չի դիտվում:


Գծապատկեր 2-ում ինքնամեկուսացման համաթվի շարժընթացն է արտակարգ դրության առաջին՝ 2020 թ. ապրիլի 14-ից մինչև մայիսի 14-ը երկարաձգման¹¹

⁸ Այս և հաջորդող գծապատկերներում ինքնամեկուսացման համաթվի ցուցանիշներն ըստ «Յանդեքս» ընկերությունների խմբի կայքէջի՝ <https://yandex.ru/company/researches/2020/podomam>

⁹ ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 3-ի N461-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N 298-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»:

¹⁰ ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N289-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին», <https://www.e-gov.am/gov-decrees/item/33564>

¹¹ ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 13-ի N543-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականի մարտի 16-ին հայտարարված արտակարգ դրության ժամկետը երկարաձգելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N298-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին», <https://www.e-gov.am/gov-decrees/item/33807/>




ԳԾԱՊԱՏԿԵՐ 4

Ինքնամեկուսացման համաթիվը երևանում՝ արտակարգ դրության 3-րդ երկարաձգման ժամանակահատվածում

կարաձգման¹³ ժամանակահատվածում: Երկու գծապատկերից էլ պարզ է երևում է, որ ակտիվության մակարդակը շատ քիչ է տարբերվում «նախակարանտինային» ժամանակահատվածից, բացառությամբ հանգստյան և տոն օրերի:

Խնդիրն այն է, որ նման քաղաքային

ակտիվության համար, թերևս, օբյեկտիվ հիմքեր չկան, եթե հաշվի առնենք կորոնավիրուսի տարածման տեմպը: Քաղաքային ակտիվության ձևավորված պայմաններում վարակի տարածման վարքագիծն ուսումնասիրելու նպատակով մեկտեղվել են «Յանդեքսի» ինքնամեկուսացման հա-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 5

Թագավարակի տարածումն արտակարգ դրության պայմաններում¹⁴

¹³ ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 12-ի N933-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականի մարտի 16-ին հայտարարված արտակարգ դրության ժամկետը երկարաձգելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N298-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», <https://www.e-gov.am/gov-decrees/item/34188/>

¹⁴ Դիտարկվող ժամանակահատվածում Covid-19-ով վարակվածների նոր դեպքերի քանակն ըստ ամսաթվերի վերցվել է ՀՀ ԱՆ Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի տվյալներից՝ <https://ncdc.am/coronavirus/confirmed-cases-by-days>

մաթվի և Covid-19 թագավարակի հաստատված դեպքերի միտումներն ըստ ամսաթվերի (տե՛ս գծապատկեր 5)¹²:

Ակնհայտ է, որ թագավարակի նոր դեպքերի կտրուկ ան առավելապես արձանագրվել է քաղաքային անցուղարձի ակտիվացմանը (ինքնամեկուսացման համաթվի ընդունած արժեքների կրճատմանը) զուգընթաց: Գծապատկեր 5-ում ինքնամեկուսացման համաթվի և թագավարակի հաստատված դեպքերի միտումների գծերը հատվում են 27.05.2020-ին, որից հետո վարակի տարածումը սաստիկ կերպով արագանում է՝ հատելով վերահսկելիության սահմանագիծը:

Այսպիսով՝ կարելի է ենթադրել, որ պա-

րետատունը, մեղմ ասած, այնքան էլ ճիշտ չի ընտրել սահմանափակումների կիրառման և, առավել ևս, դրանց թեթևացման ժամանակահատվածները. համենայն դեպս, զարգացման ընթացքի արտապատկերումներն ըստ առկա վիճակի թույլ են տալիս կանխատեսել, որ սարսափելին դեռևս առջևում է... Իսկ տեղաշարժի և գործունեության սահմանափակումների թեթևացման պայմաններում համավարակի զսպման միակ հույսը մնում են բնակչության բարձր սոցիալական պատասխանատվությունն ու ինքնակազմակերպումը: Այլապես, ինքնամեկուսացման համաթվի ներկայիս մակարդակը «երաշխավորում» է թագավարակի նոր բռնկումներ...

¹² Գծապատկերում ինքնամեկուսացման համաթիվը ներկայացված է միայն ըստ Երևանի ցուցանիշների (ՀՀ այլ քաղաքների համար համաթիվը չի հաշվարկվում), մինչդեռ Covid-19 թագավարակի հաստատված դեպքերի վիճակագրությունն ընդգրկում է ողջ հանրապետության ցուցանիշները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N 289-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին», <https://www.e-gov.am/gov-decrees/item/33564>
2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 3-ի N 461-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N 298-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»:
3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 13-ի N 543-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականի մարտի 16-ին հայտարարված արտակարգ դրություն ժամկետը երկարաձգելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N 298-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», <https://www.e-gov.am/gov-decrees/item/33807/>
4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մայիսի 14-ի N 729-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականի մարտի 16-ին հայտարարված արտակարգ դրություն ժամկետը երկարաձգելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N 298-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», <https://www.e-gov.am/gov-decrees/item/34188/>
5. ՀՀ ԱՆ Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն, <https://ncdc.am/coronavirus/confirmed-cases-by-days/>
6. World Economic Forum, Theses new gadgets were designed to fight COVID-19 /written by Peter Beech/, April 05, 2020, <https://www.weforum.org/agenda/2020/04/coronavirus-covid19-pandemic-gadgets-innovation-technology/>
7. BBC News, Coronavirus: Robots use light

- beams to zap hospital viruses, 20 March 2020,
<https://www.bbc.com/news/business-51914722>
9. Social distancing necklace warns when people get too close, Wallpaper Newsletter, 19.06.2020,
<https://www.wallpaper.com/watches-and-jewellery/social-distancing-necklace-warns-when-people-get-too-close>
10. Temming M., Smartphones put your privacy at risk, Science News for Students, January 30. 2018,
<https://www.sciencenewsforstudents.org/article/smartphones-put-your-privacy-risk>
11. Индекс самоизоляции,
<https://yandex.ru/company/researches/2020/podomam>
12. Как жители городов мира выходят из изоляции,
<https://yandex.ru/company/researches/2020/back-to-life>

Анна ПАХЛЯН

*Приглашенный эксперт исследовательского центра «Амберд», АГЭУ,
 кандидат экономических наук, доцент*

ТРАЕКТОРИЯ ПАНДЕМИИ

ИНДЕКС САМОИЗОЛЯЦИИ «ОБЕЩАЕТ» НОВЫЕ ВСПЫШКИ ПАНДЕМИИ В ЕРЕВАНЕ...

Уже третий квартал подряд всемирно известные ученые и начинающие исследователи сосредоточили свой интеллектуальный потенциал на всестороннем изучении пандемии Covid-19.

Для изучения поведения человека во время пандемии в разных городах, был разработан новый показатель - индекс самоизоляции, который позволяет оценить уровень городской активности в условиях чрезвычайного положения, сравнивая его с нормальной ситуацией в период до карантина.

Исследование индекса самоизоляции в Ереване показало, что в течение наблюдаемого периода уровень самоизоляции был выше на ранних этапах чрезвычайной ситуации, но позднее наблюдался резкий рост городской активности, несмотря на растущую тенденцию заражения. Отчасти это связано с ослаблением ограничений, а отчасти – с низкой социальной ответственностью населения. Если такие тенденции сохранятся, маловероятно, что удастся сдерживать пандемию в ближайшем будущем.

Ключевые слова: *коронавирус, Covid-19, самоизоляция, индекс, карантин, чрезвычайное положение, городская активность*

Anna PAKHLYAN

*Invited expert of "Amberd" Research Center, ASUE,
 PhD in Economics, Associate Professor*

PANDEMIC TRAJECTORY

SELF-ISOLATION INDEX "PROMISES" NEW OUTBREAKS OF THE PANDEMIC IN YEREVAN...

For the third quarter in a row, world-famous scientists and novice researchers have focused their intellectual potential on a comprehensive study of the Covid-19 pandemic.

For the study of human behavior during the pandemic in different cities, a new indicator has been developed - the self-isolation index, which allows to assess the level of urban activity in the state of emergency, comparing it with the normal situation in the pre-quarantine period.

A follow-up of self-isolation indexes in Yerevan showed that during the observed period, the level of self-isolation was higher in the early stages of the emergency, but later there was a sharp increase in urban activity, despite the growing trend of infection. This is partly due to the easing of restrictions, and partly due to low social responsibility among the population. If such tendencies are maintained, it is unlikely that the pandemic will be contained in the near future.

Keywords: *coronavirus, Covid-19, self-isolation, index, quarantine, emergency situation, urban activity*